

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՄԵՐԻ ԱՐԱՅԻ**

**ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ  
ԿՅԱՆՔԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ**

**ԺԵ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական  
արվեստ, դիզայն» մասնագիտությամբ  
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2013**

---

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСКУССТВ**

**КИРАКОСЯН МЕРИ АРАЕВНА  
ЖИЗНЬ И ТВОРЧЕСТВО ФАНОСА ТЕРЛЕМЕЗЯНА  
АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени  
кандидата искусствоведения по специальности  
17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и прикладное  
искусство, дизайн”**

**ЕРЕВАН – 2013**

Ասենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:  
Գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Աղասյան Վրարատ Վլահիմիրի**  
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Դակոբյան Նրավարդ Նրաշյայի**  
արվեստագիտության թեկնածու  
**Ավագյան Վրթուր Վարդանի**  
Առաջատար կազմակերպություն՝ Խ.Արովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան  
Պաշտպանությունը կայանալու է 2013թ. նոյեմբերի 14-ին, ժամը 14.00-ին, ՀՀ  
ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 016 Արվեստագիտության  
մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մաշշալ Բաղրամյան  
պողոտա 24/4):  
Ասենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի  
գրադարանում:  
Սեղմագիրն առաքված է 2013 թ. հոկտեմբերի 14-ին:  
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Ասատրյան Ա. Գ.**

---

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель - доктор искусствоведения, профессор  
**Агасян Араарт Владимирович**

Официальные оппоненты - доктор искусствоведения, профессор  
**Акопян Гравард Грачьяевич**  
кандидат искусствоведения  
**Авакян Артур Варданович**

Ведущая организация - Армянский государственный педагогический университет им.  
Х.Абояна

Защита диссертации состоится 14-го ноября 2013г. в 14.00 часов на заседании  
специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в  
Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна  
24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.  
Автореферат разослан 14-го октября 2013г.

Ученый секретарь специализированного совета,  
доктор искусствоведения, профессор

**Ասատրյան Ա. Գ.**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Փանոս Թերլեմեզյանը (1865-1941) հայ կերպարվեստի ռեալիստական ուղղության ականավոր ներկայացուցիչներից է: Թեև նկարչը իր ստեղծագործական բազմաժանր հարուստ ժառանգության մեջ թողել է բնանկարներ, դիմանկարներ, թեմատիկ ստեղծագործություններ, նատյուրմորտներ, սակայն Թերլեմեզյանի արվեստում գերակշռող ժանրը բնանկարն է. նա իր ներդրումն է ունեցել հայ ռեալիստական բնանկարի զարգացման գործում: Այստեղից էլ՝ Փ.Թերլեմեզյանի կյանքի ու ստեղծագործության ուսումնամիջության անհրաժեշտությունն ու հրատապությունը:

**Աշխատանքի նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության գլխավոր նպատակն է Փ.Թերլեմեզյանի կյանքի և ստեղծագործության համալիր ուսումնասիրությունը: Կարևորվել են հետևյալ խնդիրները:

- Ուսումնասիրել Փ.Թերլեմեզյանի գեղարվեստական ժառանգությունը:
- Որոշարկել նկարչի դերը հայ կերպարվեստի պատմության մեջ:
- Ուսումնասիրել Փ.Թերլեմեզյանի գրական ժառանգությունը:
- Ուրվագծել Փ.Թերլեմեզյանի՝ մշակութային գործչի դիմանկարը:
- Ներկայացնել Փ.Թերլեմեզյանի հանրային գործունեությունը:

**Աշխատության գիտական նորույթը:** Ատենախոսության մեջ առաջին անգամ՝

- Հավաքել և ներկայացրել ենք Փ.Թերլեմեզյանի հասարակական գործունեության ամբողջական տարեգրությունը, անդրադարձել նկարչի հասարակական և մշակութային բնույթի հանրային աշխատանքներին:
- Կազմել ենք լիակատար ժամանակագրությունն այն ցուցահանդեսների, որոնց մասնակցել է Փ.Թերլեմեզյանը:
- Ներկայացրել ենք Փ.Թերլեմեզյանի գրական ժառանգությունը:
- Հայտնաբերել ենք Փ.Թերլեմեզյանի կորսված համարվող Աղքամարյան արտանկարները:
- Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանում հայտնաբերել ենք նկարչի վրձնին պատկանող կանացի անթվակիր դիմանկարը:
- Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում հայտնաբերել ենք Թերլեմեզյանի անհայտ երկու բնանկարները:
- Գիտական շրջանառության մեջ ենք դրել էջմիածնի թանգարանում պահպող նկարչի երեք կտուավերը:
- Ուսումնասիրելով Փ.Թերլեմեզյանի կյանքի տարեգրությունը, նամականին և հոդվածները, ճշտել ենք «Հայուիի» (1913) դիմանկարի ստեղծման տարեթիվը և պատմությունը, պարզել «Գաղթական» (1901) կտուավի գտնվելու վայրը:

- Բացահայտել ենք, որ նկարիչը չի մասնակցել է Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի հիմնադրմանը և չի դասավանդել այնտեղ:
- Գիտական շրջանառության մեջ ենք դրել արխիվային նյութեր, հոդվածներ ժամանակի մամուլից, ժամանակակիցների վկայություններ և հիշողություններ և այլն:

**Աշխատության մեթոդաբանությունը:** Կիրառվել են ենապիրիկ-

Ակարագրական, համեմատական և քննական-վերլուծական մեթոդները:

**Գրականության տեսությունը:** Առաջին անգամ Փ.Թերլեմեզյանի մասին գրվել է «Անահիտում» (Փարիզ, 1900): Բազմաթիվ հոդվածների մեջ մասը ներկայացնում է նկարչի նախակցությունը տարբեր ցուցահանդեսներին, պատմում թերլեմեզյանի ստեղծագործական հաջողությունների մասին:

Փ.Թերլեմեզյանի արվեստին անդրադառն առաջին ընդարձակ հոդվածը հրատարակվել է «Դայաստամի կոչնակում» (1923): Նրա արվեստին ավելի հաճախ են անդրադառնել խորհրդային տարիներին. գրվել են բաժիններ մենագրություններում, ալբոներ, հուշագրություններ, հոդվածներ: Փ.Թերլեմեզյանի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրության գործում կարևոր դեր ունի Եղիշե Մարտիկյանը: Նրա առաջին ընդհանրական հոդվածը հրատարակվել է 1941-ին «Սովետական արվեստում». թես հեղինակը ներկայացրել է նկարչի արվեստի կարևոր առանձնահատկությունները, սակայն նրա ուշադրությունից վրիպել են արվեստագետի խորհրդային շրջանի գործերը: Առավել ընդարձակ և ամբողջական է նույն հեղինակի «Դայրենասեր նկարիչը» հոդվածը: Նա է հեղինակել Փ.Թերլեմեզյանի կյանքի և արվեստի առաջին և մինչ օրս միակ մենագրություն՝ շուրջ կես դար առաջ՝ 1964-ին լույս տեսած «Փանոս Թերլեմեզյան» աշխատությունը, որն ընդգրկում է Թերլեմեզյանի արվեստի բոլոր փուլերը, ներկայացնում կենսագրությունը՝ համեմված հեղինակի և նկարչի անձնական շփումների արդյունքում ձեռքբերված տեղեկություններով: Սակայն գրքում առկա են նկարչի գործերի, կենսագրական որոշ տվյալների հետ կապված անշշտություններ, հասարակական և գրական գործունեությանն առնչվող չուսումնասիրված ոլորտներ: Ե.Մարտիկյանի «Դայկական կերպարվեստի պատմություն» գրքում ընդգրկված է նկարչի կյանքի և ստեղծագործության վերլուծությունը, սակայն բացակայում է Թերլեմեզյանի արվեստի խորհրդային շրջանը: Այդ իմաստով, գույք ոչ այդքան ընդարձակ, բայց ամբողջական է Ռաֆայել Շիշմանյանի «Բնանկարը ու հայ նկարիչները» աշխատության Փ.Թերլեմեզյանին նվիրված բաժինը<sup>2</sup>:

Փ.Թերլեմեզյանի արվեստի ուսումնասիրության գործում կարևոր է Արարատ Աղասյանի «Դայ Կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» աշխատությունը<sup>3</sup>, որի էջերում իր արժանի տեղն են զբաղեցնում Փ.Թերլեմեզյանին անդրադառն հատվածները, ինչպես նաև նույն հեղինակի՝ նկարչին նվիրված տողերը «Դայ արվեստի պատմություն» գրքում<sup>4</sup>: Նեղինակը, կենսագրական փաստերից բացի, դիտարկում և դիպուկ բնութագրում է նկարչի արվեստի ընդհանուր միտուններն ու գեղարվեստական առանձնահատկությունները, անդրադառն մերժում Թերլեմեզյանի արվեստի ինչպես մինչխորհրդային, այնպես էլ խորհրդային շրջաններին:

Ընդհանուր գներով են շարադրված Օննիկ Ավետիսյանի «Դայ նկարչները

<sup>1</sup> Տե՛ս Մարտիկյան Ե., Փանոս Թերլեմեզյան, Երևան, 1964:

<sup>2</sup> Տե՛ս Շիշմանյան Ռ., Բնանկարը ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 271-283:

<sup>3</sup> Տե՛ս Աղասյան Ա., Դայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 40-41, 85:

<sup>4</sup> Տե՛ս Աղասյան Ա., Դայկորյան Դ., Դաստարյան Մ., Ղազարյան Վ., Դայ արվեստի պատմություն, Երևան, 2009, էջ 291-293 և 346-347:

և քանդակագործները 19-րդ դարից մինչ այսօր»<sup>5</sup>, Գարո Քյուրքնանի «Դաշ Ակարիչները Օսմանյան կայսրությունում»<sup>6</sup> գրքերում առկա՝ Փ.Թերլեմեզյանին նվիրված բաժինները: Ամերիկյան շրջանում ստեղծված մի քանի կտավներին է անդրադարձել Մովսես Շերկելյանը «Ամերիկահայ կերպարվեստը» թեկնածուական ատենախոսության մեջ: Նկարչի ստեղծագործության հանդեպ հետաքրքրությունն առկա է նաև մեր օրերում՝ նկատի ունենք Գարեգին Քորանջյանի «Պլեների խնդիրները Փամու Թերլեմեզյանի գեղանկարչության մեջ» հոդվածը, իսկ Ուութեն Բուբուշյանը դիտարկել է պոստիմպրեսիոնիզմի դրսնորումները արվեստագետի վաղ շրջանի մի քանի աշխատանքներում:

**Ուսումնասիրության աղբյուրները:** Ուսումնասիրության համար նյութ են ծառայել Հայաստանի ազգային պատկերասրահի հուշաձեռագրային բաժնի նկարչի ֆոնդերը (ՀՍՊ ՀԶԲ), Հայաստանի ազգային արխիվի նյութերը (ՀԱԱ), Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերը (ԳԱԹ):

**Աշխատության գործնական նշանակությունը:** Հետազոտության արդյունքները կարող են լրացնել 19-20-րդ դարերի հայ կերպարվեստի գործիչների կյանքի և ստեղծագործությանը նվիրված շարքը, օգտագործվել բուհերի հայ արվեստի պատմության դասընթացներում:

**Աշխատության փորձաքննությունը:** Ասենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնում: Աշխատանքի հիմնական դրույթները գեկուցվել են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երիտասարդ հայ արվեստաբանների գիտական առաջին (16-17 նոյեմբերի, 2005), երկրորդ (8 նոյեմբերի, 2007), երրորդ (16-17 դեկտեմբերի, 2008), չորրորդ (22 դեկտեմբերի, 2009), հինգերորդ (2-3 դեկտեմբերի, 2010), վեցերորդ (26-27 նոյեմբերի, 2011) և յոթերորդ (19-21 հոկտեմբերի, 2012) նստաշրջաններում, հրատարակվել նստաշրջանների նյութերի ժողովածուներում և «Երիտասարդ արվեստաբան - 1» գիտական հոդվածների ժողովածուում:

**Աշխատության կառուցվածքը:** Ասենախոսությունը բաղկացած է առաջարկանից, երեք գլուխներից, եղրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և պատկերների հավելվածից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջարանում հիմնավորված է ասենախոսության թեմայի արդիականությունը, նշված են նպատակն ու խնդիրները, գնահատված է թեմայի գիտական մշակվածության աստիճանը, երկայացված գրականության տեսությունը, շեշտված աշխատության գիտական նորույթը գործնական արժեքը:

### ԳԼՈՒԽ Ա. ՓԱՍԽՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ

#### 1.1. ԿԵՆԱՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ներկայացրել ենք Փ.Թերլեմեզյանը կենսագրությունը, անդրադարձել

<sup>5</sup> Տե՛ս Աvèdissian O. Peintres et sculpteurs Arméniens: du 19-ème siècle à nos jours (précédé d'un aperçu sur l'art ancien). Le Caire, 1959, p. 169-172:

<sup>6</sup> Տե՛ս Kürkman G. Armenian painters in the Ottoman Empire (1600-1923). In two volumes, Istanbul, 2004, volume 2, p. 804-810:

Ակարչի Վաճի Կենտրոնական վարժարաբանում, Պետերբուրգի Գեղարվեստը խրախուսող ընկերության նկարչական դպրոցում, Փարիզի Ժյուլիենի գեղարվեստի ակադեմիայում ուսանած տարիներին, արվեստագետի հուշերի հետ կապված հետաքրքիր դրվագներին: Ուշագրավ է 1904-ին Խրիմյան Յայրիկի պատվերով նկարչի Էջմիածնում կատարված աշխատանքների ստեղծման պատմությունը: Ե. Մարտիկյանն այդ շրջանում արված աշխատանքները համարում է կորած: Մինչեւ Թերլեմեզյանն Էջմիածնի Սայր տաճարի համար նկարում է երկու բնանկար՝ «Սևան» (1907), «Վաճի բերդը» (1913) և կրկնօրինակում 17-րդ դարի խապանացի նկարիչ Ե. Մորիկինոյի «Անարատ հիդություն» (1678) մեծադիր կտավը, որն իր գունային արտահայտչականությամբ նկարչի կրկնապատկերների մեջ լավագույնն է:

Արվեստաբանների ուշադրությունից վրիպել է Թերլեմեզյանի արվեստի վերաբերյալ և երկու հետաքրքրական դրվագ: 1916-ին Թիֆլիսի Արտիստական թատրոնում կայացած ռուս բանաստեղծ Վալերի Բրյուսովի պատվին կազմակերպված հանդիսավոր խմբույթի ճաշացանկը Թերլեմեզյանը նկարագրուել է հայկական ոճով: Վ. Ալազարի հուշերից տեղեկանում ենք Յ. Անառյանի նախաձեռնությամբ Փ. Թերլեմեզյանի և հայ մտավորականների մասնակցությամբ Յ. Պարոնյանի «Մեծապատիկ մուրացկանները» բենադրելու ծրագրի մասին: Բնադրող ռեժիսորը Անառյանն էր, որը խաղալու էր Մանուկ աղայի դերը: Փ. Թերլեմեզյանը մարմնավորելու էր Արխոնում աղայի կերպարը և ձևավորելու էր բնադրությունը:

## 1.2. Փանոս Թերլեմեզյանի մասնակցությամբ ցուցահանդեսները

Փ. Թերլեմեզյանը մասնակցել է ընդհանուր թվով 47 ցուցահանդեսների: Այդ թվում՝ Փարիզի Սան-Էտ-Ռևազի գեղարվեստանում նկերության ցուցահանդես (1900), 1900-ին՝ Ժյուլիենի ակադեմիայի ուսանողական ցուցահանդես (ներկայացրել է «Մերկ տղամարդու ֆիգուր» գծանկարը և արժանացել առաջին մրցանակին<sup>7</sup>), Ֆրանսիայի արվեստագետների ընկերության պատկերահանդես (1901): Թերլեմեզյանի հավաստմամբ, 1901-ին՝ ֆրանսիական նկարիչների պաշտոնական սալոնն ընդունում է նրա «Բանվորուհին ջրհորի մոտ» (1899) աշխատանքը, այնինչ Ե. Մարտիկյանի մոտ այս աշխատանքի սալոնի ընդունման տարեթիվ այլ է՝ 1900թ.<sup>8</sup>: 1904-ին՝ Թերլեմեզյանն արտավակադեմիական մրցույթի ժամանակ արժանանում է առաջին, պատվավոր մրցանակին «Մերկ կնոջ մարմին» աշխատանքի համար: Նոյյան թվականին՝ Փարիզի Արևելագիտաց ցուցահանդես, ռուս նկարիչների ցուցահանդես, 1905-ին՝ Թիֆլիսում կայացած ցուցահանդես, 1907-ին՝ Չուբալովի ամվան ժողովրդական տանը կազմակերպված պատկերահանդես, 1910-ին՝ Ֆրանսիացի արվեստագետների ընկերության ցուցահանդես, 1910-11-ին՝ Կ. Պոլսի ցուցահանդես, 1913-ին՝ Սյունիսնի միջազգային ցուցահանդես, 1915-ին՝ Գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերության պատկերահանդես, 1916-ին՝ հայ արվեստագետների միջության անդրանիկ ցուցահանդես, 1917-ին՝ Գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերության

<sup>7</sup> Ե. Մարտիկյանը նշում է, որ նկարիչն իր առաջին մրցանակին արժանացել է 1903-ին: Սակայն արվեստագետի հուշերի և ժամանակին հրատարակված որոշ հոդվածների համաձայն ակադեմիական առաջին մրցանակը նրան է շնորհվել 1900-ին (տե՛ս Թերլեմեզյան Փ., Հուշեր իմ կյանքի // Սպետական արվեստ, Երևան, 1941, N 2-3, էջ 94):

<sup>8</sup> Տե՛ս Մարտիկյան Ե., Փանոս Թերլեմեզյան..., էջ 17:

յան ցուցահանդես, 1919-ին՝ Կ.Պոլսի ցուցահանդես, 1919-ին՝ Հայաստանի արվեստագետների միության Երևանում կայացած, Հայաստանի Հանրապետության առաջին տարելիցին նվիրված ցուցահանդես, 1920-ին՝ Պոլսում Փ.Թերլեմեզյանի և Լ.Քյուրքչյանի համատեղ անհատական ցուցահանդեսը, 1921-ին՝ Հայ արվեստագետների միության 6-րդ ցուցահանդես (Կ.Պոլս), 1921-ին՝ Նյու Յորքի Անկախ արվեստագետների ընկերության տարեկան ուժեղորդ նկարահանդես, 1929-ին՝ “Accoçusamia художников революции” խմբավորման Սոսկվայի “Искусство в массы” ցուցահանդես, 1930-ին՝ Գեղաշխի Կերպարվեստի սեկցիայի ցուցահանդես, 1930-ին՝ Ալբրեթանի, Վրաստանի և Հայաստանի կերպարվեստի ցուցահանդեսը Թիֆլիսում, 1933-ին՝ Հայկական հրաձիգ դիվիզիայի քաղեաժնի և Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միության համատեղ՝ Կարմիր Բանակի 15-րդ տարեդարձի և հայկական դիվիզիայի պատմությանը նվիրված պատկերահանդես, 1933-ին՝ «Հայաստանի ՍՍՌ կերպարվեստագետներն ու ճարտարապետները տասներեք տարում» ցուցահանդես, 1935-ին՝ Խորհրդային Հայաստանի կերպարվեստագետների մեծ ցուցահանդես, 1937-ին՝ Հայաստանի խորհրդայնացման 16-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի կերպարվեստագետների գործերի ցուցահանդես, 1937-ին՝ Սահմանադրությանը նվիրված պատկերահանդես, 1938-ին՝ գեղարվեստական ցուցահանդես, 1939-ին՝ Սոսկվայում կայացած Հայկական ՍՍՌ կերպարվեստի ցուցահանդես, 1940-ին՝ Խորհրդային կերպարվեստագետների միության էսյուդային աշխատանքների հաշվետու և Ծրջիկ նկարչական արվեստանոցի 1939թ. աշխատանքների 8-րդ ցուցահանդես, 1940-ին՝ հոբելյանական ցուցահանդես, 1940-ին՝ Սովետական Հայաստանի 20-ամյակին նվիրված «Հայկական կերպարվեստի հոբելյանական ցուցահանդես - 20 տարի» պատկերահանդես, 1940-ին՝ Հայաստանի պետական պատկերասրահի ֆոնդերի շրջիկ ցուցահանդես, 1941-ին՝ Սովետական Հայաստանի 20-ամյակին նվիրված ցուցահանդես, Սոսկվայի Պետական Տրետյակովյան պատկերասրահում կազմակերպված սովետական արվեստագետների լավագույն գործերի ցուցահանդես:

Փ. Թերլեմեզյանն ունեցել է 6 անհատական ցուցահանդես, որոնք կազմակերպվել են ինչպես հայրենիքում, այնպես էլ արտասահմանում:

Փ.Թերլեմեզյանի «Կոստանդնուպոլիս և Մերձավոր Արևելք» առաջին ընդարձակ անհատական ցուցահանդեսը կայացել է 1924-ին ԱՍՍ-ի, Նյու Յորքի Անդերսոն ցուցարահում<sup>9</sup>. 1925-ին ԱՍՍ Դետրոյտ քաղաքի հայկական ակումբում ցուցադրվել են Թերլեմեզյանի մի քանի ստեղծագործությունները: Նույն՝ 1925-ին, Ֆրեզնոյում քացվել է նկարչի անհատական ցուցահանդեսը: 1929-ին Երևանում նկարչի հերթական անհատական ցուցահանդեսում ներկայացվել են 1904-1928-ին ստեղծված կտավները: Մեկ տարի անց՝ 1930-ին, Թիֆլիսում քացվել է նկարչի հերթական անհատական ցուցահանդեսը:

1941-ին Նկարչիների տաճր կայացել է Թերլեմեզյանի ծննդյան 75-րդ և ստեղծագործական գործունեության 40-րդ տարեդարձներին նվիրված անհատական ցուցահանդեսը: Նկարչի հետմահու առաջին անհատական ցուցահանդեսը քացվել է 1949-ին Սոսկվայում: 1965-ին Երևանում Փ.Թերլեմեզյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ կազմակերպվել է նկարչի ան-

<sup>9</sup> Ե.Մարտիկյանը Թերլեմեզյանի Նյու Յորքում կայացած անհատական ցուցահանդեսը սխալմամբ վերագրում է 1923 թվականին:

հատական պատկերահանդեսը: Նոյյն թվականի դեկտեմբերի 24-ին արվեստագետի ծննդյան 100-ամյակին նվիրված Գիտությունների ակադեմիայի հիմտերի դահլիճում կայացել է «Փառու Թերլեմեզյանի կյանքն ու գործունեությունը» հոբեյանական երեկոն, որի ժամանակ բանախոսությամբ հանդես է եկել քանդակագործ Արա Սարգսյանը: Մեկ տարի անց՝ 1966-ին, Դիլիջանի գավառագիտական թանգարանում կազմակերպվել է նկարչի ծննդյան 100-ամյակին նվիրված վերջին հոբեյանական ցուցահանդեսը:

### 1.3. Փառու Թերլեմեզյանը և Կոմիտասը

Փ.Թերլեմեզյանը կապեր է հաստատել հայ մշակույթի ականավոր գործիչներից շատերի հետ, որոնց թվում հատկապես առանձնանում է Կոմիտասի հետ նրա մտերմությունը: 1912-ի ամառնը Թերլեմեզյանը և Կոմիտասն ուղարկրվում են կոմպոզիտորի ծննդավայրը՝ Ջորտահիա, որտեղ նկարիչը ստեղծում է իր լավագույն աշխատանքներից մեկը՝ «Կոմիտաս» (1913) կտավը, որը նյու Յորքի Յայ կրթական հիմնարկության նվիրաբերության շնորհիվ Յայաստանի պետական պատկերասրահում գտնվող նկարչի ստեղծագործական հարուստ ժառանգության շարքերն է համարել 1925-ին: Թերլեմեզյանը հավատարիմ է ռեալիստական գեղանկարչության պալամոներին: Կոմիտասի կերպարն աչքի է ընկնում իր պարզությամբ և անմիջականությամբ, ինչն աշխատանքին լրացուցիչ գրավչություն է հաղորդում: Ստեղծագործությունը գուտ դիմանկարչական չէ, Թերլեմեզյանն այստեղ ներմուծել է և կենցաղային, և ազգագրական տարրեր, առարկաներ՝ ետին պլանում գտնվող վրանը, նրագեղ սափորը, քանանչան և գունային առումնով կերպարին յուրահատուկ ակտիվիտյուն հաղորդող հայկական գորգը: Դրանք լրացնում, արտահայտիչ են դարձնում երաժշտի հանդարտությամբ ու հանգստությամբ լի կերպարը:

Ինչպես նշում է Ա.Աղասյանը, «սա թեմատիկ դիմանկար է, որի մեջ մեծ տեղ է հատկացված հանճարեղ երգահանի ու բանահավաքի սևագծաստ ֆիգուրն ընթացող գունագեղ շրջապատին»<sup>10</sup>: Նկարի անբաժանելի և կարևոր մասն է լուսաստվերը: Նկարչի կատարողական վարպետությունը զգացվում է արևի լույսի և ստվերների պատկերման մեջ: Ստեղծագործության յուրահատկություններից է նաև աշխատանքում տիրող առանձնահատուկ ամրորություն, ուղարկած հանգստություն կա թե՝ կոմպոզիտորի կերպարում և թե՝ գեղատեսիլ բնության մեջ:

Թերլեմեզյանն ստեղծել է Կոմիտասին նվիրված այլ աշխատանքներ և՝ գծանկարչական գործեր և յուղանկարներ: 1911-ին Պոլսում Թերլեմեզյանը վրձնել է «Կոմիտասը գետափին» աշխատանքը: Կրկին գետնին նստած, ծառին հենված իդրօվ, սակայն այստեղ բացակայում է կերպարի մանրազնին, ռեալիստական բնութագրման ճշգրտությունը: Վրձինումների անմշակ բնույթը էտյուդային յուղորինակ թարմություն է հաղորդում աշխատանքին: Յագեցած կամաչ և մուգ երանգները ներդաշնակվում են գետի ջրերի հետ, վերջինիս մեջ առկա արտացոլումների և թափանցիկության պատկերները կատարված են ճշգրիտ և ազատ: Գեղանկարչի և երաժշտի ջերմ փոխհարաբերությունները, բազմամյա ընկերությունը ոգեշնչման ալբյուր հանդիսացան Գուրգեն Սահարու համար: «Երգ մահու և անմահության» գրական ստեղծագործության մեջ գրողն անդրա-

<sup>10</sup> Աղասյան Ա., Յայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում...., էջ 41:

դարձել է Փարիզի Վիլ-Ժյուիֆի հոգեբուժարանում Կոմիտասի և Թերլեմեզյանի հանդիպմանը:

## ԳԼՈՒԽ Բ. ՓԱՍՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ՍՏԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

### 2.1. Վաղ շրջան (1900-1915թ.)

Փ.Թերլեմեզյանն իր ստեղծագործական առաջին քայլերը կատարել է Փարիզում, նորա ինքնուրույն առաջին աշխատանքները թվագրվում են 1900-ով: Վաղ շրջանը բնորոշող աշխատանքները՝ «Աշխատավորուիին ջրհորի մոտ» (1900), «Բնանկար: Բրետան» (1900) և «Լյուսեմբուրգի գրոսայգու լճակը» (1903) կտավները, կոմպոզիցիոն հստակ կառուցվածքով լիովին համապատասխանում են ակադեմիական ռեալիզմի կանոններին: Փ.Թերլեմեզյանը նախընտրում է բնության խաղաղ, անվիդով տեսարաններ, նկարչի արվեստի ոգեշնչման աղբյուրը փարիզյան միջավայրն է՝ բնության գողտրիկ տեսարաններով: Դեռևս 1903-1904թ. Թերլեմեզյանի կատարած ընօրինակումները՝ Տիգհանի «Անտիոքն ու Յուպիտերը» (1540), Վերոնեզի «Խաչի կրելը» (1571), իրենց գունային մեկնաբանությունը զիջում են բնօրինակներին:

Թեև 20-րդ դարասկզբի Ֆրանսիայում ծննունդ էին առնում գեղանը-կարչական մի շարք ուղղություններ, այդուհանդերձ մինչև 1910-ականները Թերլեմեզյանի աշխատանքներում տեսամելի էր միայն «ակադեմիզմի կնիքը»: Ասվածի վկայությունն են «Գարդականը» (1901) և «Զարդարանը» (1910) աշխատանքները: Արածինը ներկայացնում է տղամարդու հավաքական կերպար: Սա գեղանկարչական երկու տարբեր ժամրերի դիմանկարի և սյուժետային ժանրի համատեղման օրինակ է, որը վկայում է նկարչի արվեստում արտացոլվող օրինտալ՝ արևելապատշաճական մոտիվների և առհասարակ արևելյան մշակույթի ազդեցությունների մասին: Կարելի է որոշակի նմանություններ գտնել 18-19-րդ դարերի Ֆրանսիացի գեղանկարիչ Օրաս Վեռնեի 1819-ին ստեղծված «Արարի գլուխը» աշխատանքի և Թերլեմեզյանի «Գարդականի» միջև: Նմանությունները վերաբերում են միայն ընտրված տղամարդու տիպի կերպավորմանը և Վերջինս հնանամփոփ վիճակի հաղորդմանը: Թերլեմեզյանի վաղ արվեստում օտար ազդեցությունների մասին է վկայում նաև «Զարդարանը» աշխատանքը: Կերպարային առումով որոշակի «մտերմություն» կարելի է գտնել Թերլեմեզյանի տվյալ գործի և 19-րդ դարի ֆրանսիացի գեղանկարիչ Թեոդոր Շասերիոյի «Վեներա Անդրիոնեդա» (1838) կտավի միջև:

Թերլեմեզյանի և երկու՝ «Ապաշխարողը» (1907) և «Սուլքան Սեհմեդ Ի դամբարանը Բրուսայում» (1913) կտավներում ակնհայտ նմանություն կա Արշակ Ֆերվածյանի համանում աշխատանքների հետ: Արածին կտավը մոտ է Ա.Ֆերվածյանի «Ընթերցող կրոնավորին» (1889). բացահայտ է թեմատիկ ընդհանրությունը: Թերլեմեզյանի աշխատանքում ևս համատեղված են դիմանկարը և թեմատիկ պատկերը, մինչեւ եկեղեցականին ներկայացնող ֆերվածյանի աշխատանքը դիտվում է որպես «մաքուր» դիմանկար: Արվեստագետների գործերի «նմանություն» ակնառու է նաև «Սուլքան Սեհմեդ Չելերի և դամբարանը Բրուսայում» կտավում:

Թերլեմեզյանի ստեղծագործական ժառանգության մեջ առանձնանում են բնության և ճարտարապետական շինությունների յուրօրինակ սինթեզը ներկայացնող աշխատանքները: Նկարիչը հաճախ է անդրադարձել հայկական եկեղեցիների, ինչպես նաև մզկիթների, մինարեների պատկերմանը: Նմանատիպ

աշխատանքների օրինակներ են «Տուբեռորու դամբարանը» (1904), «Սանահին վանքի գավիթը» (1904), «Դոլմա Բախչեի պալատը» (1911) կտավները: Դամբարաններ պատկերող աշխատանքները նկարչի այն եզակի գործերից են, որտեղ մուգ, ակադեմիական երփնագիրը դառնում է գունեղ և լուսավոր: Աշխատանքների կարևոր առանձնահատկությունը ոչ թե դրանց կոմպոզիցիոն հստակությունն է, այլ Թերլեմեզյանի վաղ շրջանի հանար անսովոր գունային հագեցվածությունը:

Նկարչի արվեստի պոլիսյան շրջանում հանդիպում ենք ճարտարապետական մնութիվ, որին Թերլեմեզյանն անդրադարձել է ստեղծագործական կյանքի տարբեր փուլերում: Մոնումենտալ տպավորության առումնվ անգերազանցելի օրինակ է «Ուոմելի Յիսար բերդը» (1911), որը նկարիչը պատկերել է նաև 1913-ին և 1919-ին: Նշված աշխատանքները հավաստում են, որ արդեն այս շրջանում Թերլեմեզյանը վարպետորեն հաղորդում է ճարտարապետական կառուցիչ և բնության ներդաշնակ համադրությունը:

1905-ին Դաեղում Թերլեմեզյանն ստեղծում է «Շնեղի շրջակայքը» (1905), «Հովհաննես Թումանյանը որսի ժամանակ» (1905) և «Մուշեղ Թումանյանը Սր. Գրիգոր աղբյուրի մոտ» (1905) աշխատանքները, որոնք այժմ գտնվում են Շ. Թումանյանի տուն-թանգարանում: Արվեստագետի վաղ շրջանի ակադեմիական երփնագրից ազատ, գունային արտահայտչականությանը աչքի ընկնող աշխատանքներից են «Ուխտավորների ժամանումը» (1907) և «Էջմիածնի լիճը» (1907): Լիովին կիսում ենք Արարատ Աղասյանի այն միտքը, որ Փ. Թերլեմեզյանի 1900-ականների բնանկարներում դեռ գերիշխում է ակադեմիզմին բնորոշ նույն կոլորիտը, բայց արդեն Փարիզում ստեղծված քաղաքային տեսարաններում նկարիչը դիմում է պատկերնան հմարեսիոնիստական եղանակիմ<sup>11</sup>:

Թերլեմեզյանի բնանկարչական աշխատանքների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում «Վանա լիճը և Սիփան սարը Կոտուց կղզուց» (1915) կտավը: Խստաշունչ ու գուսաց բնությունը նկարիչն արտահայտել է ջերմ և հայրենասիրական հույզերով: Նա ռեալիստական արվեստի ողջ ուժով է հաղորդում հայրենիքի խորհրդանշներ հանդիսացող Վանա լճի և Սիփան սարի պատկերները: Արվեստագետն ամբողջությամբ հրաժարվել է գորշ, մուգ ակադեմիական տոնայնությունից: Նկարչի ներկապնակը քափանցվել է լուսով:

1914-ին Փ. Թերլեմեզյանի վերջին այցը հայրենի Վան նշանավորվեց Աղբամարի Սր. Խաչ Եկեղեցու բարձրաքանդակների արտանկարների ստեղծմանը, որոնք Ե. Սարտիկյանը համարում էր կորած: Նկարիչն իր հուշագրության մեջ նշում է, որ տաճարի քանդակների ընօրինակումները գտնվում են իր մոտ: Ասատուր Մնացականյանի «Ո՞ւ են Աղբամարի բարձրաքանդակներից Փանոս Թերլեմեզյանի կատարած արտանկարները» հոդվածը կարևոր և ուղղորդիչ նշանակություն ունեցավ մեր ուսումնասիրության համար: Տախտակ 1-ում ներկայացված է Երկու քանդակապատկեր՝ Գագիկ Արծրունու կտիժտորական կոմպոզիցիայից մի հատված և խաչի կլոր շրջանից բռնած հրեշտակով ֆրագմենտը: Թերլեմեզյանն այստեղ ևս հավատարիմ է ռեալիստական արվեստի սկզբունքներին և բավականին մանրամասն ու ճշգրտորեն է պատկերել արքային: Սինչերու հրեշտակի ֆիգուրը հանդես է զալիս ուրվագծային սուր միջոցներով: Տախտակ 2-ում ունենք Երկու քանդակապատկեր. արծվի գլխով

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում:

թեավոր առյուծը և արծիվը կաքավ հոշոտելիս տեսարանը: Արվեստագետը պարզ գծանկարված, ասես քանդակված ձևերի շնորհիվ հաղորդել է առասպելական կենդանու հզորությունը և թռչումների կովի դինամիկ ռիթմը: Տախտակ 3-ում ամփոփված է Ամբակոմ մարգարեի մազերի ցցոնից բռնած դրվագը և Դանիելը առյուծների գրում տեսարանը: Այստեղ արվեստագետը կիրառել է համաշաբի և հաստատուն գծանկար: Տախտակ 4-ի ալբոնային էջում նկարիչը պատկերել է տաճարի տարրեր հատվածներից վերցրած 3 ֆիգուր: Ներկայացված են կանացի գլխով և թռչոնի մարմնով առասպելական էակ և ուղտի, արծվի պատկերներ: Տախտակ 5-ում նկարված է մեկ ընդիմանուր տեսարան՝ Եվան և օձը: Տախտակ 6-ի ածխանկարը պատկերում է առյուծի և ցի մենամարտը: Թերլեմեզյանը կենդանիների մարմինների ծցրիտ վերարտադրությամբ, սահուն գծանկարի օգնությամբ հաղորդել է կենդանական կովի ողջ ուժը և դինամիկան: Տախտակ 7-ում վերարտադրված են արծվի, քնած եզան, այժի գլխով թռչնի պատկերներ:

Արթամարյան արտանկարներն աչքի են ընկնում կատարողական բարձր վարպետությամբ, գծանկարի ծցրիտ կառուցմանը և ռեալիստական ոճի խստապարզ ձևերով. իսկ ամենակարևորը՝ ածխանկար աշխատանքներում նկարիչը հավատարիմ է մնացել Սր. Խաչ Եկեղեցու քանդակապատկերների ձևերին, դրանց ծավալատարածական մողելավորմանը:

## 2.2. Միջին շրջան (1916-1927թ.)

1916-ին Վրաստան կատարած ճանապարհորդության արդյունքում ստեղծվում են բազմաթիվ բնապատկերներ՝ պավառուն կտավներ և էտյուդային գործեր. «Սախինջառութի», «Ազի ցանկապատով», «Բարումի շրջակայթը» և «Հին Թիֆլիսը վերջալույսին»: Թերլեմեզյանը մերժում է ակադեմիական մուգ երանգավորումը: Նկարչի վրձնահարվածներն ավելի ազատ, էքսպրեսիվ են դառնում, իսկ գոյնը հագեցած է խիտ, ավելի կտրուկ ձևեր է ընդունում լուսի և ստվերի մոդելավորումը, արկի ջերմության և լուսի պատկերումը հանդես է գալիս կոնտրաստային և ուժեղ շեշտադրումներով, բացակայում են նախորդ շրջանի որոշ աշխատանքներին բնորոշ տոնային նուրբ եկանքները: Արվեստագետը չի սահմանափակվում միայն բնությունից ստացած սուրբեկուիվ տպավորություններով, խնդիր է դնում այն պատկերել ռեալիստորեն:

Ինպատեսինիզմի ազգեցությամբ նկարչի գոյնապնակը հետզհետև ազատվում է ակադեմիական մռայլ գոյններից: Կտավները հագենում են օղով ու լուսով, անհետանում է առարկաների ուղղվագիրը: Սակայն իմպրեսիոնիզմի ազդեցությունը Թերլեմեզյանի արվեստում չափավոր էր:

«Պատերազմի արհավիրքներ» (1916) դրամատիկ ստեղծագործության մեջ ներկայացված թեմայի «խորիրանշաննը», կարծես, անգոմների պատկերն է, որը հիշեցնում է Վասիլի Վերեցչագինի «Պատերազմի փառաբանումը» (1871): Թերլեմեզյան ստեղծում է իրեն անհանգուացնող թեմայով կտավներ՝ Արևմտյան Յայստանում ծավալված արյունոտ տեսարանները պատկերող գործեր: Նկարիչը, վերապրելով Սեծ Եղեռնը, չէր կարող չանդրադառնալ կորսված հայրենիքի անդարմանելի վշտին: Այդ հովգերով են տոգորված «Մայրը որոնում է դիակների մեջ իր որդուն» (անթվակիր) և «Դայ գաղթականները լուսնյակ գիշերին ողբում են իրենց հայրենիքը» (անթվակիր) անավարտ աշխատանքները: Սյուժետային բովանդակություն ունեցող, հոգեբանական բարդ իրավիճակների

և մարդկային այլ հուզառատ տեսարաններում թերլեմեզյանը գերծ է մնում իրապաշտական մանրախոյզ նկարագրից:

1910-ականներին Թերլեմեզյանը կրկին վերադառնում է ճարտարապետական շինությունների պատմերմանը՝ «Գոյ մզկիթը» (1917), «Բայազետ սուլթանի մզկիթը: Բրուսա» (1925) և «Սիրո տաճար: Կիսլովոդսկ» (1918): «Գոյ մզկիթում» արվեստագետը դիմում է խոշոր պլանների: Իրապաշտական գեղանկարչության տեսակետից այս ստեղծագործությունը մահմեդական ճարտարապետական կառույցների պատկերման առաջիկ հաջող օրինակ է:

Թերլեմեզյանի արվեստի պոլիսյան վերջին շրջանի լավագույն բնանկարներից են «Բոսֆորի ափերը անձրևից հետո» (1919) և «Կոստանդնուպոլիսի շրջակայքը» (1919). դրանցում զգացվում է հարագատ վայրերի հանդեպ արվեստագետի կարուտը, ինչն աշխատանքներին յուրօրինակ կենդանություն և քարություն է հաղորդում: 1920-ականներին Թերլեմեզյանի բնապատկերների գլխավոր թեման ծովային տարերքն է: Այս աշխատանքները գեղարվեստական այլ դրակ, գունային այլ նկարագիր են կրում դիտողի մոտ արքնացնելով նոր տրամադրություններ և զգացողություններ: «Ժայռեր: Լա Սանչի ափին» (1921), «Բրեստան» (1921) և «Ավի: Իշխանաց կղզիներ» (1922) բնանկարները վկայում են, որ Թերլեմեզյանը ծովային պատկերների հմտությունը վարպետ է: Նախկին չոր պատկերանքը փոխարինվում է ձկուն վրձինումներով, ջրային տարածություններ պատկերելիս նա վերարտադրում է վերջիններիս թափանցիկությունը՝ չնոռանալով տոնային նուրբ անցումների մասին: Տեսարանների գլխավոր առավելությունը գունային աստիճանական փոփոխությունների վարպետ պատկերումն է: Ծովափնյա տեսարանները դիտողին գրավում են իրենց ռոմանտիկ հովանուկ, լույսի տպավորիչ խաղերով: Դրանք հիմնականում խաղաղ և հաճախստ են:

ԱՄՍ-ում ստեղծված բնանկարները միանգամայն այլ տպավորություն են թողնում: Բնության երեմնի հանդարտությունը փոխարինվում է անսովոր փոթորկուտ, «ընդվզող» հոգեվիճակով: Այս առումով աչքի են ընկնում «Նիազարա» (1923), «Նիազարայի ջրվեժը» (1923) և «Կոլորադոյի մեծ ջորը» (1923) կտավները: Փորորկուտ ջրերի ալեկոնումը և անսասան ժայռերի համադրությունը տրված է ռեալիստական մեծ ուժով: Թերլեմեզյանի արվեստում առաջին անգամ բնապատկերը ճեռք է բերում էպիկական շունչ:

Պայծառ գույների և իմպրեսիոնիստական թեք երփնագրության համարությամբ կատարված «Զկնորսութին» (1923) և «Ֆրեզմոնի հասարակական այգին» (1926) աշխատանքները հոգեկան խաղաղ տրամադրություն ստեղծող, գողոտիկ և մեղմ տեսարաններ են:

### 2.3. Խորհրդային շրջան (1928-1940թթ.)

1928թ. սեպտեմբերի 5-ին Փ.Թերլեմեզյանը վերադառնում է Հայաստան և բնակություն հաստատում Երևանում՝ ապրելով իր ստեղծագործական վառ շրջանը: Ստեղծված կտավների մեծամասնությունը բնանկարներ են, որոնց ոգեշնչան աղբյուրը և թեման Հայաստանն էր: Թերլեմեզյանը խորհրդահայ կերպարվեստում դառնում է արդյունաբերական բնանկարի հիմնադիրներից մեկը՝ վրձնում «Ղափանի պղնձաձուլարան» (1929), «Ալավերդի: Ընդհանուր տեսարան» (1931) և այլ աշխատանքներ: Թերլեմեզյանի այս բնանկարներին բնորոշ են վավերագրական ճշտությունը, սերը դեպի կոմեկտ դրվագների մանրամասն նկարագրումը: Հայաստանի տարբեր շրջաններ նկարչի կատարած ճանապարհորդության ընթացքում ստեղծվում են հայկական կոլորիտը ներկայացնող բնա-

պատկերներ՝ «Յին Գորիս», «Արյունոտ լեռներ», «Յին Երևան» և «Տարեկի վանքը» (բոլորը՝ 1929) կտավները: Նկարչի ամերիկյան շրջանի բնանկարներում սկզբնավորված վեհ, էպիկական շումը գարգանում է խորհրդային շրջանի բնանկարներում:

Թերլեմեզյանն իր ուրույն դերն ունեցավ նաև 1920-40-ականներին կարևոր խնդիր դարձած՝ հեղափոխական գաղափարների, կյանքի սոցիալիստական վերափոխման գեղարվեստական արտացոլման գործում: Նկարիչը մարմնավորում է իր ժամանակի հայացքները, համոզմանքները, այդ թվում՝ «Մուրճ և մանգաղի հարթանակը» (1931) և «Քաղաքացիական կրիվներ» (1933) աշխատանքներում: «Արզնի: Յանձնույան տուն» (1931) և «Զոր: Սանահին» (1931) բնանկարներն աչքի են ընկնում բնության անկրկնելի հնայքով, պայծառ գույներով և զվարդ տրամադրությամբ:

1932-ին Թերլեմեզյանը նկարազարդել է «Նոյեմբեր» գրական-գեղարվեստական, գրաքննադատական հանդեսի շապիկը՝ հավքի ոճավորված պատկերով:

Դա գեղանկարիչներից շատերն են անդրադարձել Արարատի և Սևանի պատկերնար: Փ.Թերլեմեզյանի համար ևս թե՛ թիրլիական Արարատը և թե՛ Սևանա լիճը ստեղծագործական ոգեշնչման աղյուր են հանդիսացել: Թերլեմեզյանն իր արվեստի միջին և խորհրդային շրջաններում անընդմեջ անդրադարձել է վերջիններիս պատկերնար: Նրա Արարատյան պատկերները մեծամասամբ աշնանային բնանկարներ են: «Արարատ» (1933) կտավում ենք երփնագրի որոշակի փոփոխություն: Գույները կորցնում են իրենց երբեմնի հնչեղությունը, բացակայում են բաղարային տեսարանների հատվածները, փոխարենը կարևորվում են արկի լուսի արտացոլանքը, լուսաստվերային անցումները: Ուեալիստական երփնագրության գրավչությունն արտահայտվել է «Առաջին ճառագայթները Արարատի վրա» (1937) կտավում: Ուրվագծային պարզ բնութագիր ունի «Վերջապլյանի շողերը Արարատի վրա» (1939) աշխատանքը: Թերլեմեզյանական Արարատները կրում են նկարչի ստեղծագործական ծեռագորի հնքնատիպ կնիքը: Եթե Ստեփան Աղաջանյանի Արարատի տեսարաններն աչքի են ընկնում լեռան և շրջապատող միջավայրի մանրանասն վերատադրմաբ, ապա Թերլեմեզյանի լեռան պատկերներն ավելի ընդհանրական են, որոշ դեպքերում՝ էտյուդային: Տեսարանի պատկերնար, ընտրված դիտակետի և լուսաստվերային անցումների տեսանկյունից արվեստագետի բնապատկերները մոտ են Գևորգ Բաշինջառյանի Արարատներին: Նկարչի արվեստում Արարատի տեսարաններից ոչ պակաս կարևոր տեղ են գրավում Սևանա լիճը ներկայացնող բնապատկերները: Յամենատելով՝ նկատում ենք, որ Գաբրիել Գյուրջյանի Սևանի բնապատկերներում կարևոր նշանակություն է ստանում ջրային արտացոլանքի, բափանցիկության պատկերումը, մինչդեռ Թերլեմեզյանի «Ժայռոտ ափ» (1937) աշխատանքը հանդես է գալիս երանգային վառ շեշտադրումներով, ժայռի և լճի պատկերի ընդհանրական նկարագրով: Փ.Թերլեմեզյանի վիճանած Սևանի բնանկարները հիմնականում խաղաղ տեսարաններ են:

## 2.4. Դիմանկարը և նատյուրմորտը Փանոս Թերլեմեզյանի արվեստում

Փ.Թերլեմեզյանը թողել է նաև դիմանկարչական ստեղծագործություններ: Այդ ժամրում նկարչի ամենավաղ գործը 1897-ին Ուելի բանտում մատիտով

կատարված «Ինքնադիմանկարն» է: Առաջին հնգնանկարը պատկերված է գրագետ, որտեղ ազատ շորիսների օգնությամբ նկարիչը տալիս է կերպարի ռեալիստական բնութագիրը: 1900-ականներին Թերլեմեզյանն անդրադարձում է Գևորգ Բաշինջառյանի և Գիգռ Շարբարյանի կերպարներին: Աշխատանքները մուգ երանգի և դարչնագույն ֆոնի կիրառան շնորհիվ լիովին համապատասխանում են «ակադեմիական դիմանկար» հասկացությամբ: Նաև հատկանիշներով է օժտված նաև «Լոռեցի հովիվը» (1905): Ավ. Խասհակյանի տուն-թանգարանում հայտնաբերեցինք Թերլեմեզյանի վրձնին պատկանող «Սիջկա դիմանկար» (անրվակիր) աշխատանքը: Դատելով նկարի «քանձարանային» կոլորիտից, այն մոտավոր թվագրում ենք 1905-ով: Թերլեմեզյանը կավճանատիտով շատ կենդանագրեր է ստեղծել: Ստեղծագործական վաղ շրջանում է որսկորվում նկարչի՝ այս տեխնիկայի նախընտրությունը, ինչը նրան երանգային այլ լուծումներ գտնելու հնարավորություն է տալիս:

Ակադեմիական երփնագրությանը համահունչ կտավների կողքին Թերլեմեզյանը վրձնում է գեղանկարչական այլ բնութագիր և «ասելիք» ունեցող «Աշխատավորություն դիմանկար» (1908) և «Հողագործի դիմանկար» (1912): Դրանք նկարչի վաղ շրջանի եզակի գործերից են, որտեղ անհետացել են գորշ երանգները, և պատկերը «լիաթոր շնչում է» լուսավոր գույներով: Զգացվում է ֆրանսիական երփնագրության ազդեցությունը՝ պիեներային ընկալումներով հանդերձ: Մեր ուսումնասիրության արդյունքում հայտնաբերեցինք Թերլեմեզյանի՝ մի կանացի դիմանկարի հետ առնչվող կարևոր փաստեր: Խոսքը «Հայութի» նկարի մասին է: Երաժշտագետ Որեքեւ Արայանի «Տամակները պատմում են...»<sup>12</sup> հոդվածից տեղեկանում ենք, որ աշխատանքում պատկերված է Կոմիտասի և Թերլեմեզյանի աշակերտուիկ Արմինե Մելիքյանը: Ե. Մարտիկյանն այս կտավը թվագրում է 1930-ով, մինչդեռ այն ստեղծվել է 1913-ին, Պոլսում:

Թերլեմեզյանի դիմանկարները կատարված են գրագետ, նկարիչը կարծես զգուշ և հաղորդել բնորդի արտաքին նմանությունը՝ ընդհանրական ձևերից գնալով դեպի մանրամասն նկարագիրը: Նկարչի դիմանկարներն անհաղորդ են անհատի ներքին ապրումները, որանք չունեն Ս. Աղաջանյանի և Ե. Թադևոսյանի կենդանագրերի հոգեբանական խորությունը:

1921-ին Փարիզում Թերլեմեզյանն ստեղծում է «Տղամարդու դիմանկար» (1921) և «Նորաստունյանի դիմանկար» (1921): Միջին շրջանի որոշ դիմանկարներում, անձի արտաքին նմանության հավասար պատկերումից զատ, նկարիչը փորձում է հաղորդել հոգեկան ապրումների, հույսերի ելեզները: Թերլեմեզյանի՝ արդեն ԱՄՆ-ում երփնագրած դիմանկարները նույնպես ռեալիստական կերպավորման լավ օրինակներ են, որոնք աչքի են ընկնում ավելի ճշգրիտ և մանրամասն նկարագրու: Արվեստագետն ստեղծում է «Դերասան Զուրաբյանի դիմանկարը» (1925), «Դերասան Ջ. Աբելյանի դիմանկարը» (1925) և «Զորավար Անդրանիկի դիմանկարը» (1925): Նկարիչը հեռանում է վաղ աշխատանքներին հասուկ ընդհանրական մոտեցումից՝ կարևորելով կերպարների անհատական բնութագրի յուրաքանչյուր մանրամասն: Վաղ աշխատանքներին բնորոշ տոնային նուրբ անցումները փոխարինվում են գունային ռեալիստական, առարկայական շոշափելի շեշտադրումներով: Ակնհայտ է, որ միջին շրջանում ստեղծված դիմապատկերները դեռևս կրում են ակադեմիական նկարչության

<sup>12</sup> Արայան Ռ., Նամակները պատմում են // Սովետական արվեստ, Երևան, 1967, N 2, էջ 41-45:

ազդեցությունը: Նկարչի դիմանկարչական արվեստում դրսևորված ռեալիստական ուղղությունն իր հետագա զարգացումն է ստանում խորհրդային շրջանում: Իրապաշտական արվեստի համոզիչ ուժով է հաղորդում դիմապատկերների ճշգրտությունը: Խորհրդային շրջանի դիմանկարներում առաջնային դեր է ստանում գունային մոդելավորումը, գիծն ավելի ծկրւն է և ներդաշնակում է պատկերի ընդհանուր համակարգին: Դեռևս նկարչի ամերիկան շրջանի դիմանկարներում նկատվող նատուրալիստական տարրերը երեմն տեղ են գտնում նաև խորհրդային շրջանի առանձին դիմանկարներում, որոնցից են Ռոմանոս Մելիք-յանի, Յրացյա Աճառյանի և Ավետիք Խսահակյանի դիմանկարները (բոլորը՝ 1928):

Թերլեմեզյանի ամուր գծապատկերի վարպետությունն են ցուցադրում «Պղնձածովարանի հարվածայինը» (1931) և «Կարի գործարանի հարվածայինը» (1932): Եթե Ս.Աղաջանյանի «Էմեխստրեստի հարվածային Սիմոնյանի դիմանկարը»՝ լուծված ռեալիստական պատկերածի համաձայն, տպիս է իրապաշտական երփնագրության նույր օրինակ, ապա Թերլեմեզյանի հարվածայինների պատկերները հիմնականում օժնանկարչական բավականին չոր աշխատանքներ են: 1932-ին արվեստագետն անդրադառնում է Վահրամ Ալազանի, Ակսել Բակունցի, Գուրգեն Մահարու դիմանկարներին: Թեև Փ.Թերլեմեզյանի դիմանկարները գուրկ են հոգեբանական խոր և հոգական վար բնութագրից, սակայն 19-20-րդ դարերի հայ դիմանկարչության մեջ իրենց ուրույն տեղը գրադարձող աշխատանքներ են:

Փ.Թերլեմեզյանը հազվադեպ է անդրադարձել նատյուրմորտներին, քանակյին առումով դրանք զիջում են դիմանկարներին: Կարծես այս ժամանք չի ոգեշշնչել նկարչին. Վաղ և ուշ շրջաններում նատյուրմորտներն իսպառ բացակայում են: Վերջիններիս առավելապես հանդիպում ենք արվեստագետի ամերիկյան շրջանի աշխատանքների շարքում:

«Նատյուրմորտ, մրգեր» (1916) աշխատանքը կատարված է նկարչի վաղ կտավներին բնորոշ մուգ երփնագրությամբ: Մուգ գունային ծևագոյացմանը ստեղծված նատյուրմորտների կողքին գունային թարմ ընկալմանը աչքի են ընկնում ծաղիկներ պատկերող նատյուրմորտները: Հագեցած և խիս վլծնահարվածներով ստեղծված «Նատյուրմորտ: Նոներ» (1926) գործում արտացոլվել են նկարչի հոգեկան ապրումները: Նուան վրա առկա ճեղքերը ցավոտ տեսք ունեն: Ստեղծագործությունը խորհրդանշում է նկարչի անցած դժվարին՝ կորուստներով և փորձություններով լի կյանքի ուղին:

Իմպրեսիվիստական արտահայտչածները նատյուրմորտներում բացակայում են. դրանք իրապաշտական գեղանկարչության ոգով ստեղծված կտավներ են:

#### ԳԼՈՒԽ 4

### ՓԱԼՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ, ՂԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՂԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

#### 3.1. Փանոս Թերլեմեզյանի գրական ժառանգությունը

Տիրապետելով մի քանի լեզուների, Փ.Թերլեմեզյանը պարսկերենից հայերեն է բարգմանել պարսից բանաստեղծ Բաբա Թահեր Օրիանի քայլակները, որոնք լրիս են տեսել «Գեղարվեստի» 1908-1909թթ. համարներում:

Թերլեմեզյանի հոդվածները 15-ն են, որոնցից 8-ում առաջադրված են

արվեստագետին հուզող քաղաքական հարցեր. դրանց մի մասը թողնում է հուշագրության տպավորություն:

«Ժողովրդին ենք պարտական» հոդվածը 1916-ին հրատարակվել է «Վաճ-Տոսպ» տարեգրում: Քաղաքական թեմաների հետ առնչվող նկարչի թերևս ամենածավալուն հրապարակման մեջ՝ «Ժողովրդ» օրաթերթում լույս տեսած «Կացութիւնը Կովկասի մէջ» գրվածքում, հեղինակը մանրամասն խոսում է 1919-ին Կովկասում քաղաքական հրադրության, տիրող տրամադրությունների, Ազրբեջանում հայտարարված զորաշրջի նախին: Նկարչի անտիպ գրվածքը՝ «Աղասու հագուստը ըստ իմ հիշողության 1878ր.: Թատրոնի ելույթ – Թիֆլիս», վկայում է, որ նկարիչը խաղացել է թատրոնում: Թերլեմեզյանը տալիս է տվյալ թատերական ներկայացման իր հերոսի հանդերձանքի նկարագիրը: Նկարիչն անդրադառնում է 1890-ականներին Արևատյան Հայաստանում տիրող քաղաքական ծանր իրադրությանը: Թիֆլիսում հրատարակվող «Պրոլետար» թերթում լույս տեսած «Հայտարարություննում» խոսվում է նկարչի հայրենիք վերադառնալու մասին: Խորհրդային ժամանակաշրջանում նկարիչը պարբերաբար հոդվածներ է տպագրում տարբեր ամսագրերում, թերթերում, որոնցից կարելի է նշել ԽՍՀՄ սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկնանը վերաբերող հոդվածը, որտեղ նկարիչը կարևորում է Սահմանադրության նախագծի հաստատման փաստը: Սահմանադրության ծրագրի դրվագնի մեկ այլ դրսերում է «Նոր սահմանադրության արևի տակ» հոդվածը: «Յոկտեմբերյան հաղթանակին» հոդվածում նկարիչը խոսում է հայրենադարձության նախին: Թերլեմեզյանի քաղաքական բնույթի վերջին հոդվածը նվիրված է Խորհրդային Հայաստանի 19-ամյակին: Եթե մինչխորհրդային շրջանի քաղաքական որոշ հոդվածներում Թերլեմեզյանը հանդես է գալիս քննադատական սուր խոսքով, ապա խորհրդային շրջանում այն առավել քան հանդուրժողական է:

1913-ին «Ծանք» հանդեսում հրատարակված «Երկու հայ ճարտարապետներ» հոդվածում խոսվում է պոլսահայ երկու ճարտարապետների՝ Յովսեփ Ազնավուրի՝ եգիպտացի իշխանի համար Կ.Պոլսի Բերայի թաղամասում կառուցած շինության և Լևոն Նաֆիլյանի՝ «Ծիրքեթ Խայրի» նավային ընկերության համար Ղալաթիայի շինության մասին:

Առևում բնակվելու առաջին տարիներին՝ 1923-ին, «Հայաստանի կոչնակ» շաբաթերթում տպագրված ընդարձակ հոդվածում Թերլեմեզյանն անդրադառնում է արվեստի տեսական խնդիրներին և արժարություն հայ ճարտարապետության պահպանման անհրաժեշտության հարցը: Նկարչի մեկ այլ ստվարածավալ հոդված լույս է տեսել «Հայաստանի կոչնակում» և Վերաբերում է սփյուռքահայ նկարիչ Յովսեփ Փուշմանի անհատական ցուցահանդեսին<sup>13</sup>: Յոդվածը ներկայացնում է Փուշմանի արվեստի կարևոր առանձնահատկությունները և խոսում ստեղծագործությունների ոճի մասին: «Նկարչական դպրոցի ցուցահանդեսի մասին» ծեռագիր փորթածավալ հոդվածում խոսվում է նկարիչների տանը կազմակերպված նկարչական դպրոցի հաշվետու ցուցահանդեսի մասին:

### 3.2. Փանոս Թերլեմեզյանի հասարակական գործունեությունը

Փ.Թերլեմեզյանը եռանդուն հասարակական գործիչ էր. նա շոշափելի ներդրում է ունեցել թե՝ հայրենիքի և թե՝ սփյուռքի հասարակական կյանքում:

<sup>13</sup> Թերլեմեզյան Փ., Յովսեփ Փուշման // Հայաստանի կոչնակ, Նյու Յորք 1924, N 16, էջ 499:

Նկարչի հասարակական գործունեությունը բաժանվում է երկու ենթախմբի՝ քա-  
դաքական-հեղափոխական և արվեստի հետ առնչվող:

1905-ին Թիֆլիսում հիմնադրված «Գեղարվեստը խրախուսող կովկաս-  
յան ընկերության» առաջարկով նկարիչը համալրում է դրա շարքերը: 1910-ին,  
Թերլեմեզյանը Պոլսում անվանի նկարիչ Լևոն (Սերովը) Քյուրքյանի հետ հա-  
մատեն բացում է նկարչական ստուդիա<sup>14</sup>: 1912-ին արվեստագետը նախակցում  
է Վարուժանի և Յակոբ Սիրունու նախաձեռնությամբ «Աստեղատան» հիմնա-  
դրմանը: 12 անձից բաղկացած մտավորականների խմբակի անդամներն էին Կո-  
միտասը, Փ.Թերլեմեզյանը, Լևոն (Սերովը) Քյուրքյանը և այլք<sup>15</sup>: 1916-ին  
Փ.Թերլեմեզյանը, Վ.Սուրենյանցը, Մ.Սարյանը, Ե.Թադևոսյանը, Ս.Խաչատրույյա-  
նը, Գ.Լևոնյանը, Գ.Չարբարյանը և այլք համախմբվում են Յայ արվեստագետ-  
ների միության հիմնադրման գաղափարի շուրջ, որի նպատակն էր հայերի մեջ  
տարածել գեղարվեստական կրթությունը, գեղարվեստական օջախներում վեր-  
ստեղծել հայկական ոճը<sup>16</sup>: 1917-ին Թերլեմեզյանը Ռուսովովում հիմնում է Միութ-  
յան մասնաճյուղը:

Թերլեմեզյանի ակտիվ հասարակական գործունեության վկայությունն է  
1913-ին Կ.Պոլսի Էսայան վարժարանի սրահում առաջին անգամ կազմակերպ-  
ված Գրական դասը, որի քննարկման նյութն էր Լևոն Շանթի «Յին Սաստվածնե-  
րը»: Դատավարությունը նախագահում էր Գարեգին Խաչակը, Ժյուրիի անդամ-  
ներն էին Փ.Թերլեմեզյանը, Կոմիտասը, Գրիգոր Զոհրապը և այլք: 1921-ին Թեր-  
լեմեզյանը նաև նկարչել է Կ.Պոլսի Յայ արվեստի տաճ ստեղծմանը, եղել գեղար-  
վեստական աշխատարանի և հրատարակության խմբագրության համաձայնը-  
րի անդամ և «Անկարչական» բաժնի ատենապետը<sup>17</sup>: Կարևորում ենք նկարչի գոր-  
ծունեության ամերիկյան շրջանին վերաբերող ևս մեկ նորահայտ իրողություն՝  
1923-ին Թերլեմեզյանին, դերասան Հովհաննես Աբելյանին և երաժիշտ Ալեք-  
սանդր Ասլանյանին միավորում է մի ընդհանուր ծրագիր՝ նյու Յորքի ամերիկա-  
հայ արվեստագետների միության ստեղծումը: Խորհրդային շրջանում Թերլե-  
մեզյանն անդամնեցել է արվեստի տարրեր միությունների: Նա ներգրավվում է  
AXPP գեղարվեստական խմբավորման մեջ, 1928-ին ընտրվում Յայաստանի  
Կերպարվեստագետների ընկերության պատվավոր անդամ: 1930-ին Յայաստա-  
նի հեղափոխական նկարիչների ասոցիացիայի անդամներից էր<sup>18</sup>: Անդամնեցել  
է ՀԿ(Բ)Կ ԿԿ-ի 1932-ի բյուրոյի որոշմամբ ձևավորված Խորհրդային Կերպարվես-  
տագետների միության կազմկոմիտեին: 1932-ին ՀՍՍՀ Լուսողկոմի որոշմամբ  
Թերլեմեզյանը նշանակվում է Պետական Կուլտուր-Պատմական բանգարանի  
«Աշխատանքի հերոսների և հարվածայինների գիլրիայի» Ժյուրիի անդամ: 1937-  
ի Թիֆլիսի այցելած Յայաստանի կերպարվեստագետների 32 հոգուց բաղկա-  
ցած պատվիրակությանը մեջ էր նաև Փ.Թերլեմեզյանը: Մայիսի 19-ին Կրաստա-  
նի նկարիչների միության վարչության ընդույնված նիստում Փ.Թերլեմեզյանը,  
Մ.Սարյանը, Յ.Կոջոյանը դառնում են Վրաստանի խորհրդային նկարիչների  
միության պատվավոր անդամներ:

<sup>14</sup> Ծիշմանյան Ռ., Բնանկարը ու հայ նկարիչները ..., էջ 278:

<sup>15</sup> Սիրովի Յ., Ինքնակենազրական նոքեր, Երևան, 2006, էջ 194:

<sup>16</sup> Յայ արվեստագետների միություն: Կամնագրություն, Թիֆլիս, 1916, էջ 10-15:

<sup>17</sup> Յայ առունեան տուն, Կ.Պոլս, 1921, էջ 14, Ավակյ Ա. Իz ստորև հաջոյական կամաց առաջնային աշխատանքների մասին:

<sup>18</sup> Ավակյ Ա. Իz ստորև հաջոյական կամաց առաջնային աշխատանքների մասին:

### 3.3. Φωνού Θεριζέμεσεργανή μάσανακεցությունը Վանի հերոսամարտին

Փ.Թերլեմեզյանը հայ ժողովողի պատմության ամենաոլդերգական իրադարձությունների ժամանակ մի կողմ նմելով նկարչական պարագաները՝ մասնակցեց Վանի ինքնապաշտպանական մարտերին:

Թեև որոշ աղյուրներում նշվում են Փ.Թերլեմեզյանի մասնակցությունը Գեղարդ տեխնիկումի իհմնադրման գործում և այդ դպրոցում նրա դասավանդման հաճամանքը<sup>19</sup>, սակայն քննության արմելով Գեղարվեստա-արդյունաբերական տեխնիկումի ստեղծման պատմությունն ու արիխվային վավերագրերը պարզեցինք, որ նկարիչը նշված ուսումնական հաստատության կայացման գործում ներդրում չի ունեցել, ավելին՝ նա երբեք չի դասավանդել այդ դպրոցում<sup>20</sup>:

1941-ի մայիսի 4-ին Փ.Թերլեմեզյանը վախճանվում է: Բայց մինչ այդ՝ 1941-ի ապրիլի 30-ին, ՀՍՍԴ ժողովրդական Կոմիսարների Սովետը որոշում էր ընդունել Երևանի Գեղարդ տեխնիկումը նրա անունով անվանակոչելու մասին:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

➤ Հայ կերպարվեստի դասական Փ.Թերլեմեզյանն իր արվեստի ձևավորման սկզբում ընտրեց գեղանկարչության ռեալիստական, իրապաշտական ուղղությունը, որին ամրավաճան մնաց ատեղծագործական ողջ կյանքում:

➤ Թեև Փ.Թերլեմեզյանի արվեստը կազմավորվել է օտար երկրներում, մասնավորապես Ֆրանսիայում, որտեղ XX դրասակզբում ծնունդ է կնա առել գեղանկարչական մի շարք ուղղություններ, այդուհանդերձ մինչև 1910-ականները Թերլեմեզյանի աշխատանքներում տեսանելի էր միայն ակադեմիզմի դրոշը, որն արտահայտվում էր գունաշարի միհապաղաղ, գորշ շագանակագույն, դարչնադեղնավուն երանգներում: Նկարչի արվեստում սակավ են եվրոպական արվեստի ազդեցությունները, որոնք հիմնականում հանդիսանում են գալիս նրա արվեստի ձևավորման շղանում՝ արտահայտվելով ոչ ամբան գեղարվեստական մեթոդի, պատկերանդ կամ գունային համակարգի, որքան կոնկրետ կերպարանքի նմանության մեջ: Փ.Թերլեմեզյանի բնանկարներն օժտված չեն նույր կոլորիտով և պատկերվող բնության քնարականությամբ: Վաղ շրջանի կտավներում հանդիպում ենք փարիզամ թաղամասերի պատկերների, որոնք արտահայտում են տիխորության և մենության գգացումներ: Արվեստի միջին փուլում՝ սկսած 1915-ից, հմարեսիդնիզմի չափավոր ազդեցությամբ նկարչի ներկապնակն ազատվում է ակադեմիական մռայլ գույներից: Գեղարվեստական այլ որակներով են օժտ-

<sup>19</sup> Տե՛ս. Ստունան Ի. Искусство Армении, Москва, 2007, српр. 304, Ստունան Ի. Очерки изобразительного искусства Армении, Москва, 1985, српр. 70.

<sup>20</sup> Ուսումնարանը հիմնադրվել է 1921-ին, երբ Թերլեմեզյանը դեռևս բնակվում էր Փարիզում: Նկարիչը Սովետական Դաշնայտան է տեղափոխվել 1928-ին, երբ գեղարվեստի դպրոցը լիովին կազմակրված էր: Խորհրդային շրջանում Թերլեմեզյանը ճամկապարծական գործունեություն չի ծավալել: 1929-ին Արիլուտգիշապաշտության կողմից Փ.Թերլեմեզյանը նշանակվել է Գեղարդ տեխնիկումի 1928-29 ուսումնական տարրան ընթացավարտների աշխատանքը ստուգո, որպակվորող հանճռաժողովի անդամ: Դարոցից տօնիղնության նախաձեռնությամբ կազմակերպվել է Փ.Թերլեմեզյանի հանդիպումը (քվականը անհայտ) ուսանողների հետ, որի ժամանակ նկարիչը պատմել է Փարիզի ժողովենի ակադեմիայում ուսանած տարիների և 1915-ին Վանի ինքնապաշտպանական մարտերի մասին, արտահայտել արվեստի վերաբերյալ իր տեսակետները:

ված և այլ գաղափարներով են ներշնչված Փ.Թերլեմեզյանի 1920-ականների գործերը. ծովային տեսարաններն արտահայտում են նկարչի ռոմանտիկ հովազերը, իսկ ամերիկյան շրջանի բնանկարները նրա անհանգիստ, վորորկոտ հոգեվիճակի վկաներն են: Խորհրդային տարիներին Փ.Թերլեմեզյանը դառնում է մեզանում արդյունաբերական բնանկարի հիմնադիրներից: Բնանկարներն առավել մոնումենտալ, էպիկական բռնւյթ են ստանուն: Թեև Փ.Թերլեմեզյանի դիմանկարները գորկ են հոգեբանական խոր և հուզավից վառ նկարագրից, այնուամենայնիվ, դրանք XIX-XX դարերի հայ դիմանկարչության մեջ իրենց ուրույն տեղը գրաղեցնող աշխատանքներ են:

➤ Փ.Թերլեմեզյանի գրական ժառանգությունն առնչվում է և հասարակական-քաղաքական խնդիրներին, և արվեստի տարարնույթ հարցերին: Նկարչի գրական 15 հրապարակումներում առաջարված են ինչպես ստեղծագործական, գեղարվեստական ու գեղագիտական, այնպես էլ ազգային՝ հասարակական ու քաղաքական խնդիրներ:

➤ Մ.Մաշտոցի ամվան Մատենադարանում են գտնվում կորած համարվող, 1914-ին Աղքամարի Ար. Խաչելեցու հարթաքանդակներից Փ.Թերլեմեզյանի կատարած արտանկարները:

➤ Ավ.Իսահակյանի տուն-քանգարանում է գտնվում Փ.Թերլեմեզյանի վլոձին պատկանող «Աղջկա դիմանկարը» (անթվակիր): Աշխատանքի դեղնադարչնագույն երանգավորումից և կատարման եղանակից ելնելով՝ այն մոտավոր թվագրում ենք 1905 թվականով:

➤ Յովհ.Թունանյանի տուն-քանգարանում են գտնվում Թերլեմեզյանի անհայտ երկու կտավներ՝ «Յովհաննես Թունանյանը որսի ժամանակ» (1905) և «Մուշեղ Թունանյանը Ար. Գրիգոր աղբյուրի մոտ» (1905):

➤ Եջմիածնի քանգարանում են գտնվում Փ.Թերլեմեզյանի ստեղծագործության վաղ շրջանին պատկանող երեք գործեր, որոնցից երկուսը բնանկարներ են՝ «Սևան» (1907), «Վանա քերդը» (1913), իսկ մեկը, 1904-ին ստեղծված, 17-րդ դարի իսպանացի գեղանկարիչ Էստեբան Մուրիլյոյի «Անարատ հղիություն» կտավի կրկնօրինակն է:

➤ Փ.Թերլեմեզյանի «Յայուիի» դիմանկարն ստեղծվել է 1913-ին:

➤ Փ.Թերլեմեզյանի «Գաղքական» (1901) կտավը գտնվում է Յայաստանի ազգային պատկերասրահում:

➤ Փ.Թերլեմեզյանը ոչ մի առնչություն չի ունեցել Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի հիմնադրման հետ և երբեւ չի դասավանդել ուսումնական այդ հաստատությունում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՐԵՊԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կիրակոսյան Ա., Փանոս Թերլեմեզյանը իր ուսուցիչների և արվեստի մասին, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական առաջին նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, էջ 178-181:

2. Կիրակոսյան Ա., Փանոս Թերլեմեզյանը և Կոմիտասը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երկրորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 64-70:

3. Կիրակոսյան Ա., Էջեր Փանոս Թերլեմեզյանի անվան ուսումնարանի

պատմությունից, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երրորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 84-91:

4. Կիրակոսյան Մ., Փանոս Թերլեմեզյանի Աղթամարյան արտանկարների մասին, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական չորրորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 74-82:

5. Կիրակոսյան Մ., Փանոս Թերլեմեզյանի էջմիածնում գտնվող աշխատանքների մասին, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հիմնգերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 46-52:

6. Կիրակոսյան Մ., Յ. Թումանյանի և Ավետիսհակյանի տուն թանգարաններում պահվող Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործությունների մասին, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական վեցերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 26-33:

7. Կիրակոսյան Մ., Դիմանկարը Փանոս Թերլեմեզյանի արվեստում, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջան՝ նվիրված S. Չուխանյանի ծննդյան 175-ամյակին, նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 174-181:

8. Կիրակոսյան Մ., Փանոս Թերլեմեզյանի գրական ժառանգությունը, Երիտասարդ արվեստաբան-1, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 71-83:

# КИРАКОСЯН МЕРИ АРАЕВНА

## ЖИЗНЬ И ТВОРЧЕСТВО ФАНОСА ТЕРЛЕМЕЗЯНА

### Резюме

Фанос Терлемезян (1865-1941) - один из выдающихся представителей реалистического направления в армянском изобразительном искусстве XIX-XX вв. Хотя многоожанровый художник в своем творческом наследии оставил пейзажи, портреты, тематические работы, натюрморты, но преобладающим жанром в творчестве Ф. Терлемезяна остается пейзаж. Он внес свой вклад в развитие армянского реалистического пейзажа. Трудная и наполненная испытанием жизнь художника прошла за рубежом, и только в 1928 году он вернулся в Армению.

Цель диссертации заключается в комплексном изучении жизни и творчества Фаноса Терлемезяна. В свое время о жизни и творческой деятельности художника были написаны разделы в монографиях и очерках по истории армянского изобразительного искусства, альбомы, мемуары. Искусствовед Егише Мартикян сыграл большую роль в изучении жизни и творчества Фаноса Терлемезяна. Он автор первой и до сих пор единственной монографии о нем, которая была опубликована полвека назад, в 1964 году.

- В нашем исследовании мы впервые собрали и представили летопись общественной деятельности Ф. Терлемезяна.
- Составили полную хронологию тех выставок, в которых участвовал Ф. Терлемезян.
- Впервые представили литературное наследие художника.
- В Матенадаране имени Месропа Маштоца обнаружили считавшиеся пропавшими рисунки Ф. Терлемезяна, которые были скопированы с рельефов храма Сурб Хач (Святой Крест) в Ахтамаре.
- В Доме-музее Аветика Исаакяна нами было найдено недатированное и до сих пор неизвестное изображение девушки.
- В Доме-музее Ованнеса Туманяна мы обнаружили два неизвестных пейзажа художника: "Ованнес Туманян во время охоты" (1905) и "Мушег Туманян у родника св. Григора" (1905).
- Ввели в научный оборот три полотна художника: "Севан" (1907), "Крепость Вана" (1913) и копию картины испанского художника 17 века Э. Мурильо "Непорочное зачатие", которые хранятся в музее Эчмиадзина.
- Изучив письма, статьи и летопись жизни Ф. Терлемезяна, мы уточнили дату создания и историю портрета "Армянка" (1913), выяснили местонахождение полотна "Беженец" (1901, Национальная галерея Армении).
- Отвергли распространенную в искусствознании точку зрения, согласно которой Ф. Терлемезян участвовал в учреждении Художественного училища имени Фаноса Терлемезяна и преподавал там.
- Использовали новые архивные материалы, рукописные страницы, свидетельства и воспоминания современников.

Диссертация состоит из предисловия, трех глав, заключения, списка использованной литературы и альбома иллюстраций.

Первая глава диссертации, которая состоит из трех параграфов, называется “Путь жизни Фаноса Терлемезяна”. В первом параграфе мы представили главные страницы биографии художника: годы обучения в Петербурге и Париже, период ареста и странствий, а также период депортации. Второй параграф представляет полную хронологию выставок, в которых участвовал Ф. Терлемезян. Третий параграф работы посвящен двум выдающимся представителям армянского искусства - Фаносу Терлемезяну и Комитасу, где представлены свидетельства их тесной дружбы и духовного родства.

Вторая глава диссертации (“Творчество Фаноса Терлемезяна”) состоит из четырех параграфов. Первый относится к раннему творчеству Ф. Терлемезяна (1900-1915), которое мы оцениваем как период формирования художника, когда в его искусстве еще преобладает влияние академической школы. Рассматривая ранние работы Ф. Терлемезяна, мы проводим параллели между ними и работами французских художников 19 века Ораса Верне и Теодора Шассерио, а также сравниваем одноименные произведения Ф. Терлемезяна и Аршака Фетваджяна. Второй параграф представляет средний период творчества мастера (1916-1927), где, особенно в морских пейзажах, уже заметно умеренное влияние импрессионизма. В работе дается сравнительный анализ созданных в разные годы картин художника, что позволяет нам увидеть и понять характер и направление его творческой эволюции. В третьем параграфе мы изучили пейзажи и тематические картины Ф. Терлемезяна, которые были созданы в советский период, отметили роль художника в создании индустриального пейзажа. Четвертый параграф посвящен проблеме формирования и развития двух жанров - портрета и натюрморта в творчестве Ф. Терлемезяна.

Третья глава диссертации названа “Литературная, общественная и патриотическая деятельность Фаноса Терлемезяна”. Первый параграф посвящен литературному наследию художника, во втором представлена летопись общественной деятельности Ф. Терлемезяна. В третьем говорится об участии художника в Ванском героическом сражении.

В заключении изложены общие выводы исследования. Классик армянского изобразительного искусства Ф. Терлемезян, выбрав в начале своего творческого пути реалистическое направление живописи, оставался верен ему на протяжении всей жизни. Искусство Ф. Терлемезяна формировалось за рубежом, в частности, во Франции - стране, где в конце XIX - начале XX вв. зарождались многие современные течения искусства, но до 1910 года в работах Ф. Терлемезяна видны отпечатки академизма. Начиная с 1915 года, благодаря умеренному влиянию импрессионизма, палитра художника освобождается от академических мрачных тонов. В советские годы Ф. Терлемезян становится одним из основоположников национального индустриального пейзажа. Портреты художника лишены психологической глубины и эмоционального напряжения, однако они занимают заметное место в армянском изобразительном искусстве XIX-XX вв.

# KIRAKOSYAN MERI

## THE LIFE AND OEUVRÉ OF PANOS TERLEMEZYAN

### Summary

Panos Terlemezyan (1865-1941) is one of the most prominent representatives of the realistic direction in Armenian art of the XIX-XXth centuries. Although the multi-genre painter has left landscapes, portraits, thematic works and still lifes, but the dominant in his oeuvre remains the landscape genre. He has a unique contribution in the development of Armenian realistic landscape painting. The artist spent most part of his life, full of difficulties, in foreign countries, and only in 1928 he returned to Armenia.

The main objective of the dissertation is a comprehensive study of Panos Terlemezyan's life and oeuvre. Artist's life and art has been presented within the sections of monographs and overviews on Armenian art, as well as albums and memoires. Eghishe Martikyan has played an important role in the study of P. Terlemezyan's life and oeuvre. He is the author of the first and the only monograph about the painter, which was published a half-century ago, in 1964.

- In our research for the first time a complete chronicle of artist's public activity, social and cultural life has been collected and presented.
- We have also developed a complete chronology of the exhibitions in which P. Terlemezyan participated.
- For the first time is presented P. Terlemezyan's literary heritage.
- In Matenadaran after Mesrop Mashtots we have found P. Terlemezyan's lost drawings, that are copied from the reliefs of "Holy Cross" ("Surb Khach"), the church on Achtamar island.
- In the museum after Avetik Isahakyan we have found an undated and unknown portrait of a young lady.
- In the museum after H. Tumanyan we have found two unknown landscape paintings, entitled "Hovhannes Tumanyan at hunting" (1905) and "Mushegh Tumanyan at St. Gregory rill" (1905).
- Artist's three canvases, kept at Etchmiadzin museum, have been presented to the Scientific Society: "Sevan" (1907), "Fort of Van" (1913), and the copy of the 17th century Spanish painter E. Murilyo's "Pure pregnancy" painting.
- While studying P. Terlemezyan's correspondence, articles and life chronicle, we have clarified the date of creation and the history of the portrait called "An Armenian woman" (1913) and found out the location of the painting called "A Refugee" (1901).
- We have rejected the standpoint that the painter participated in the establishment of art college after Panos Terlemezyan and taught there.
- New archival materials, manuscripts, as well as the reminiscences and testimonies of Terlemezyan's contemporaries have been put into scientific circulation.

The dissertation consists of a preface, three chapters, conclusions, a list of references and a catalogue of illustrations. The first chapter, that includes three paragraphs, is entitled "The life of Panos Terlemezyan". In the first paragraph the main pages of painter's biography are presented: the years of study in Petersburg and Paris, the periods of

imprisonment, journeys and repatriation. The second paragraph presents a complete chronology of the exhibitions, in which the artist participated. The third paragraph dwells on two outstanding representatives of Armenian art: Panos Terlemezyan and Komitas, and the evidences of their mutual friendship and spiritual affinity.

The second chapter of the dissertation (“Panos Terlemezyan’s oeuvre”) consists of four paragraphs. The first one covers the early period oeuvre of Terlemezyan (1900-1915), which we consider as the painter’s formation period, when the academic school impact was still dominant in his art. While studying the works of his early period, we draw comparisons between P. Terlemezyan’s and the 19th century French painters Horace Vernet’s and Theodor Shassero’s works, we also compare the similar canvases of Panos Terlemezyan and Arshak Fetvatchyan. The second paragraph focuses on Terlemezyan’s work of the middle period (1916-1927), where, especially in the marine painting, the reasonable influence of impressionism is already noticed. In the thesis we compare artist’s several works of the same name, but created in different periods of time. This allows us to follow the direction of the painter’s creative evolution. In the third paragraph we have studied Terlemezyan’s landscapes and thematic paintings, that were created during Soviet time. We have also pinpointed the role of Terlemezyan in the establishment of industrial landscape genre in Armenia. The forth paragraph covers the establishment and development of two genres in P.Terlemezyan’s art, that of portrait and still life.

The third chapter of the dissertation is entitled “The literary, public and patriotic activities of P.Terlemezyan”. The first paragraph dwells on the literary heritage of the artist, the second one presents the complete chronicle of P. Terlemezyan’s public activities, the third paragraph is about the participation of P. Terlemezyan in the heroic battle of Van in 1915.

Basic points are summarized in the conclusions. Panos Terlemezyan, the classic of Armenian art, having selected the realistic direction od art from the very beginning of his career, stayed true to it during his whole life. Terlemezyan’s art has been formed abroad, particularly in France, a country, where at the beginning of the 20th century numerous art movements were being created. However, until 1910 artist’s works still wore the stamp of academicism. Starting from 1915, due to the reasonable influence of impressionism, the artist’s palette gets free from gloomy academic colors. In the Soviet times Terlemezyan becomes one of the founders of industrial landscape genre.

Although the portraits of P. Terlemezyan lack some psychological profoundness and emotional tension, however they have a notable place in the Armenian art of the XIX-XXth centuries.